## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ՈՐՈՇՈՒՄ

24 փետրվարի 2022 թվականի թիվ 28-Ա
ք. Երևան

### «ՌԱԴԱՐ ԱՐՄ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿԱԶՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 43-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով «ՌԱԴԱՐ ԱՐՄ» ՍՊ ընկերության 2022 թվականի փետրվարի 17-ի հեղինակազորման հայտը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշում է.***

1. Բավարարել հայտը և հեղինակազորել «ՌԱԴԱՐ ԱՐՄ» ՍՊ ընկերությանը՝ տալով տեսալսողական մեդիածառայություն մատուցողի կարգավիճակ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՌԱԴԱՐ ԱՐՄ» ՍՊ ընկերությանը պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ — Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

2022թ. փետրվարի 24
ք. Երևան